Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 8. Փրկարար ուժերի համալրումը

1. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից ստեղծված փրկարար ուժերի համալրումը կատարում է այդ ուժերն ստեղծող մարմնի ղեկավարը:

2. Մասնագիտացված փրկարար ուժերում և փրկարարների պատրաստման հաստատություններում որպես փրկարար ընդունվում են խաղաղ ժամանակ շարային զինվորական ծառայությանը պիտանի զինծառայողների համար սահմանված առողջական չափանիշներին համապատասխանող անձինք:

3. Փրկարարական աշխատանքների անմիջական կատարմանը ներգրավվում են փրկարարական ուսուցում անցած և ներքին գործերի բնագավառում~~արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառի~~ պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից որակավորված անձինք:

4. Փրկարար ուժերում փրկարար ընդունելիս նրա հետ կնքվում է փրկարարական ծառայության պայմանագիր, որտեղ նշվում են աշխատանքի առանձնահատկությունները և ռեժիմը, աշխատանքի վարձատրության կարգը և չափը, սոցիալական արտոնությունները և երաշխիքները, փրկարարի վրա դրված խնդիրները, պարտականություններն ու այլ դրույթներ: